



Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ
Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ի Ց

14 սեպտեմբերի 2017 թվականի N 39

24. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ-
ՆԵՐԻ ՍԵՅՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հավանություն տալ՝

1) Հայաստանի Հանրապետությունում շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացման ռազմավարությանը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետությունում շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացման ռազմավարության կիրարկումն ապահովող միջոցառումների ժամանակացույցին՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Հանձնարարել պետական կառավարման մարմինների ղեկավարներին և առաջարկել տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներին՝ իրենց ենթակայության շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացման ծրագրերը մշակելիս՝ ղեկավարվել սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հավանության արժանացած ռազմավարության դրույթներով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ
2017 թ. հոկտեմբերի 2
Երևան

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ



ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՅՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ

I. ՆԱԽԱԲԱՆ

1. Ռազմավարությունը համահունչ է Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N646-Ա որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրին և նպատակաուղղված է հանրապետության տարածքում սեյսմակայունության բարձրացման կարիք ունեցող տարբեր նշանակության շենքերի և շինությունների անվտանգ շահագործմանը, սեյսմիկ ռիսկի նվազեցմանը և հնարավոր հետևանքների կանխարգելմանը:

2. Փաստաթղթում ներկայացված են գոյություն ունեցող տարբեր նշանակության շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացման սկզբունքները, այդ ուղղությամբ համապատասխան միջոցառումների իրականացման քայլերը, սեյսմակայունության բարձրացում պահանջող շենքերի և շինությունների առաջնահերթության չափանիշները:

3. Ռազմավարությունն ընդգրկում է 2018-2030թթ. ժամանակահատվածը և կարող է հանդիսանալ շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացման հիմնական ռազմավարական փաստաթուղթ՝ ապահովելով ռազմավարական ուղենիշեր հանրապետական գործադիր մարմինների, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց կառավարման ոլորտում գտնվող շենքերի և շինությունների մասով միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրային փաստաթղթերի մշակման համար:

II. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4. Ռազմավարությունում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) սեյսմիկ անվտանգություն՝ իրավիճակ, որի դեպքում բացակայում է սեյսմիկ ռիսկը.

2) սեյսմիկ ռիսկ՝ մարդկային, նյութական, մշակութային արժեքների և այլ հնարավոր կորուստներ՝ պայմանավորված ուժեղ երկրաշարժով.

3) սեյսմիկ վտանգ՝ տարածքում հնարավոր ուժեղ երկրաշարժի սպառնալիք, որը գնահատվում է Հայաստանի Հանրապետության կառավարության և (կամ) այլ իրավական ակտերով սահմանված կարգով.

4) սեյսմակայունություն՝ կառուցվածքի դիմադրողականությունը երկրաշարժի ազդեցությանը.

5) սեյսմիկ խոցելիություն՝ տարբեր ուժի երկրաշարժերի դեպքում շենքերի և շինությունների վնասման և փլուզման, մարդկային ու նյութական արժեքների կորուստի հավանականություն.

6) սեյսմիկ խոցելիության գնահատում՝ շենքերի և շինությունների սեյսմիկ խոցելիության գնահատում (շենքերի, շինությունների հնարավոր վնասվածության աստիճանի կանխատեսում ուժեղ երկրաշարժի դեպքում) և մարդկային ու նյութական արժեքների կորուստի հավանականության գնահատում.

7) սեյսմիկ ռիսկի գնահատում՝ ուժեղ երկրաշարժով պայմանավորված՝ մարդկային, նյութական, մշակութային արժեքների և այլ հնարավոր կորուստների գնահատում.

8) ուժեղ երկրաշարժ՝ երկրաշարժ, որի ուժը, ըստ Ռիխտերի մագնիտուդային սանդղակի, մեծ է 5.5 բալից.

9) սեյսմիկ ռիսկի նվազեցում՝ պետության և հասարակության երկարաժամկետ համալիր և բազմաբնույթ գործողություններ (վարչական, իրավական, սոցիալական, տնտեսական, ուսուցողական, կրթական, գիտական, ինժեներատեխնիկական, կազմակերպչական և այլն)՝ ուղղված ուժեղ երկրաշարժից մարդկային, նյութական, մշակութային արժեքների և այլ հնարավոր կորուստների նվազեցմանը.

III. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

5. Հայաստանի Հանրապետության տարածքը գտնվում է աշխարհի առավել բարձր սեյսմիկ ակտիվության գոտիներից մեկում, որտեղ, ըստ պատմավիճակագրական տվյալների, տեղի են ունեցել բազմաթիվ ավերիչ երկրաշարժեր: Հանրապետության տարածքում հնարավոր են ավելի քան 7,0 մագնիտուդով երկրաշարժեր: Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ ուժեղ երկրաշարժերի կրկնելիության միջին պարբերությունը կազմում է 30-40 տարի:

6. Հանրապետության տարածքում տեղի ունեցած վերջին ամենաաղետալի սեյսմիկ իրադարձությունը 1988 թվականի դեկտեմբերի 7-ի Սպիտակի երկրաշարժն է (մագնիտուդը՝ 7.0), որի միջին ուժգնությունը կազմել է՝ Սպիտակում 9-10 բալ, Գյումրիում (Լենինական) 8.5-9 բալ, Վանաձորում (Կիրովական) և Ստեփանավանում 8 բալ՝ ընդունված հաշվարկային ուժգնությունը գերարազանցելով Սպիտակում՝ 3 բալով, Գյումրիում՝ 0.5-1 բալով, Վանաձորում և Ստեփանավանում՝ 1 բալով (ըստ ուժգնության գնահատման MSK-64 սանդղակի):

7. Սպիտակի երկրաշարժն ընդգրկել է հանրապետության տարածքի ավելի քան 40%-ը մոտ 1 միլիոն բնակչությամբ, որը բերել է մարդկային զգալի կորուստների և տնտեսական մեծ վնասների: 517 հազար մարդ դարձել են անօթևան, լրիվ կամ մասնակի ավերվել են 21 քաղաքներ և շրջկենտրոններ, 342 գյուղեր, ավելի քան 230 արդյունաբերական օբյեկտներ (82 հազ. աշխատատեղով): Քանդվել կամ տարբեր աստիճանի վնասվածություն են ստացել 8,9 մլն քառ.մ ընդհանուր մակերեսով բնակարանային ֆոնդը, 150,2 հազար աշակերտական տեղով հանրակրթական դպրոցները, առողջապահական 416 օբյեկտները, առևտրի, սննդի, կապի, տրանսպորտի, կոմունալ տնտեսության և այլ նշանակության մեծաքանակ օբյեկտները: Երկրաշարժի հասցրած ընդհանուր վնասը կազմել է շուրջ 12 միլիարդ ԱՄՆ դոլար (նախկին ԽՍՀՄ-ի արժույթով՝ 13 միլիարդ ռուբլի):

8. Սպիտակի երկրաշարժի պատճառած վնասները հիմնականում պայմանավորված են եղել՝

1) հանրապետության տարածքի սեյսմիկ վտանգի թերագնահատման հանգամանքով.

2) սեյսմակայուն շինարարության նախագծային նորմերի խախտումներով,

3) շինարարության ցածր որակով.

4) երկրաշարժի տևողությամբ, տատանումների ուղղաձիգ բաղադրիչի մեծությամբ և այլ առանձնահատկություններով.

5) սեյսմակայուն շինարարության նորմատիվ փաստաթղթերի պահանջների անկատարությամբ,

6) արտակարգ իրավիճակի պայմաններում ազգաբնակչության համապատասխան հմտությունների և իրազեկման բացակայությամբ:

9. Սպիտակի ավերիչ երկրաշարժի ծանր հետևանքների վերլուծության հիման վրա 1989 թվականից ի վեր սեյսմիկ անվտանգության ապահովման տեսանկյունից իրականացվել են մեծածավալ աշխատանքներ: Մասնավորապես, վերագնահատվել է Հայաստանի տարածքի սեյսմիկ վտանգի մակարդակը, կազմվել է սեյսմիկ շրջանացման նոր քարտեզ, վերանայվել է սեյսմիկ ազդեցություններից շենքերի և շինությունների պաշտպանության ոլորտի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համալիրը: Մշակվել և գործողության մեջ են դրվել մի շարք հանրապետական շինարարական նորմեր, ազգային ստանդարտներ և այլ նորմատիվ փաստաթղթեր, որոնցով ներկայումս կանոնակարգվում է հանրապետությունում սեյսմակայուն շինարարության իրականացումը:

10. Երկրաշարժից հետո սեյսմիկ անվտանգության ապահովման գործում ամենանշանակալի ավանդը եղել է սեյսմակայուն շինարարության սկզբունքորեն նոր՝ ազգային նորմերի (ՀՀՇՆ II-2.02-94 «Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր») մշակումը, որը գործողության մեջ է դրվել 1995 թվականից, այնուհետև վերանայվել և հաստատվել է Հայաստանի Հանրապետության

քաղաքաշինության նախարարի 2006 թվականի փետրվարի 3-ի N24-Ն հրամանով (ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր»): Նոր նորմերով սահմանվել են առավել խստացված պահանջներ, ընդունվել է հանրապետության տարածքի սեյսմիկ գոտիավորման նոր քարտեզ, որի համաձայն հանրապետության տարածքը բաժանված է երեք՝ ըստ ուժգնության աճող հաջորդականությամբ 1, 2, 3 գոտիների:

11. Չնայած իրականացված աշխատանքներին, շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացման ոլորտում դեռևս առկա են լուծման կարիք ունեցող խնդիրներ՝ պայմանավորված հանրապետության տարածքի բարձր սեյսմակտիվության պայմաններում շենքերի և շինությունների սեյսմակայունության ներկայիս ցածր մակարդակով:

12. Սեյսմիկ անվտանգության տեսանկյունից շենքերի և շինությունների սեյսմակայունության մակարդակի բարձրացման խնդրի լուծումը պահանջում է անդրադարձ կատարել դրա իրագործման միջոցների ընտրությանը հանրապետությունում ներկայումս ստեղծված սոցիալ-տնտեսական պայմանների համատեքստում:

13. Շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացման խնդիրը բխում է 2015 թվականի մարտի 18-ին Ճապոնիայի Սենդայ քաղաքում կայացած ՄԱԿ-ի երրորդ համաշխարհային համաժողովում ընդունված՝ Ադետների ռիսկի նվազեցման «Սենդայի 2015-2030թթ. գործողությունների ծրագրից և ամրագրված է նաև ՀՀ Նախագահի 2007 թվականի փետրվարի 7-ի ՆՀ-37-Ն հրամանագրում, ՀՀ Նախագահի 2010 թվականի օգոստոսի 28-ի ՆԿ-140-Ն կարգադրությունում, ՀՀ կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի N429 և ՀՀ կառավարության 1999 թվականի հունիսի 7-ի N392 որոշումներում:

IV. ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

14. Ըստ փորձագիտական գնահատականների հանրապետությունում առկա են տարբեր նշանակության ավելի քան 545 հազար շենքեր և շինություններ, այդ թվում՝ 428 հազար անհատական բնակելի տուն, 19 հազար բազմաբնակարան շենք և 98 հազար տարբեր նշանակության շենքեր և շինություններ (այդ թվում՝ պատմամշակութային հուշարձաններ):

15. Գոյություն ունեցող տարբեր նշանակության շենքերի և շինությունների գերակշռող մասը կառուցվել է մինչև 1988 թվականը: Դրանց նախագծային սեյսմակայունությունը, համաձայն տարբեր ժամանակաշրջաններում սեյսմակայուն շինարարության ընդունված նորմերի պահանջների, նախատեսված է եղել 7 և 8 բալ (ըստ ուժգնության գնահատման MSK-64 սանդղակի): Հանրապետության տարածքի սեյսմիկ վտանգի վերագնահատման և սեյսմիկ ազդեցությունների ուժգնության

մակարդակի բարձրացման արդյունքում դրանք այլևս չեն բավարարում սեյսմակայուն շինարարության գործող նորատիվ փաստաթղթերի պահանջներին:

16. Գոյություն ունեցող շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացման հնարավոր ուղղությունների և առաջնահերթությունների որոշման, դրանց պահպանմանն ու անվտանգ շահագործման ապահովմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումների ծրագրավորման և իրականացման վերաբերյալ որոշումների ընդունման համար կարևորվում է շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը:

17. Չնայած շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության ընթացակարգերը սահմանված են ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերով, սակայն վերջին 25 տարիների ընթացքում դրանց տեխնիկական վիճակի և խոցելիության գնահատման համակարգված հետազննություններ չեն իրականացվել, գործընթացը կրել է իրավիճակային բնույթ:

18. Անհրաժեշտ ծավալով չեն իրականացվել նաև հետազոտությունների արդյունքում եզրակացությունների համաձայն սեյսմակայունության բարձրացման կարիք ունեցող շենքերի և շինությունների համար առաջարկված միջոցառումների կիրառման աշխատանքները: Իրավիճակը հիմնականում մեկնաբանվում և պատճառաբանվում է պայմանագրային հիմունքներով մասնագիտացված կազմակերպությունների կողմից շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննությունների կատարման, ինչպես նաև շենքերի և շինությունների անվտանգ շահագործման ապահովման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների սահմանափակությամբ:

19. Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սեյսմիկ ռիսկի նվազեցման նպատակով շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացման համար նախապես կատարված ծախսերը տնտեսական և ֆինանսական տեսանկյունից 7-10 անգամ ավելի արդյունավետ են, քան հետևանքների վերացման համար պահանջվող ծախսերը:

20. Շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի համակարգված հետազոտություններ և եզրակացություններին համապատասխան անհրաժեշտ միջոցառումներ չիրականացնելու կամ թերի իրականացնելու արդյունքում շենքերի և շինությունների զգալի մասը հայտնվել է անբավարար կամ վթարային տեխնիկական վիճակում և սեյսմակայունության տեսանկյունից հուսալի չլինելու պատճառով չեն կարող ապահովել բնակչության անվտանգությունը: Ըստ փորձագիտական գնահատականների ներկայումս գոյություն ունեցող շենքերի և շինությունների 70%-ը խոցելի են և կարող են վտանգ ներկայացնել ընդունված նորմատիվային ուժգնության երկրաշարժերի դեպքում:

21. Հաշվի առնելով, որ ներկայումս տարածաշրջանի սեյսմիկ ակտիվությամբ պայմանավորված սեյսմիկ ռիսկը Հայաստանի տարածքում ձգտում է բարձր մակարդակի՝ գոյություն ունեցող տարբեր նշանակության շենքերի և շինությունների, հատկապես բարձր ռիսկայնության աստիճանի դասակարգում ունեցող հատուկ և կարևորագույն նշանակության օբյեկտների սեյսմակայունության բարձրացմամբ ուժեղ երկրաշարժերից հնարավոր կորուստները նվազագույնի հասցնելու և բնակչության անվտանգությունն ապահովելու խնդիրը կարևոր գործոն է հանդիսանում հանրապետության սոցիալ-տնտեսական կայուն զարգացման և ազգային անվտանգության ապահովման համար:

V. ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ

22. Ռազմավարության նպատակը՝ Հայաստանի տարածքում առկա սեյսմիկ ռիսկի նվազեցման և բնակչության անվտանգության ապահովման հիմնախնդիրը գոյություն ունեցող շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացման միջոցով լուծելու համար համապատասխան նախադրյալների ստեղծումն է և այդ ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումների իրականացումն ապահովող համակարգված քայլերի ու գործողությունների հիմնավորված հստակեցումը:

23. Ռազմավարության հիմնական սկզբունքներն են՝

1) սեյսմավտանգ տարածքներում շենքերի և շինությունների սեյսմակայության բարձրացման խնդրի առաջանահերթ լուծում և անվտանգ շահագործման ապահովում.

2) ուժեղ և ավերիչ երկրաշարժերի դեպքում մարդկային և նյութական կորուստների հնարավոր նվազեցում.

3) սեյսմակայունության բարձրացման կարիք ունեցող շենքերի և շինությունների ընտրության առաջնահերթության չափանիշների սահմանման համակարգված մոտեցման ներդրում.

4) շենքերի և շինությունների սեյսմակայության բարձրացման ուղղված ծրագրերի իրականացման գործընթացում ներդրողների ներգրավմանն ու պետական-մասնավոր գործակցության (ՊՄԳ) խթանմանն աջակցություն.

5) շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացմանն ուղղված առանձին ոլորտային նպատակային ծրագրերի իրականացման շարունակականության ապահովում.

6) ծրագրերի իրականացման գործընթացներին հասարակության իրազեկվածության ու մասնակցության ապահովում.

7) հիմնախնդրի լուծման գործընթացներին մասնակից կողմերի միջև փոխհամաձայնեցված համագործակցության ապահովում:

VI. ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ

VI.1 ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

24. Նպատակ ունենալով միջնաժամկետ և երկարաժամկետ ժամանակահատվածում նպաստել բնակչության անվտանգության ապահովմանը, որպես սեյսմիկ անվտանգության ապահովման հիմնախնդրի լուծման առավել նպատակահարմար տարբերակ, դիտարկվում է շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացմանն ուղղված առանձին ոլորտային նպատակային ծրագրային մոտեցումը:

25. Նման ծրագրային մոտեցումը հնարավորություն կտա ըստ ոլորտների գնահատել և համակարգել առկա իրավիճակը, վերհանել խնդիրները, սահմանել դրանց լուծման առաջնահերթությունները:

26. Ոլորտային ծրագրերը մշակելիս պետք է հաշվի առնվեն սեյսմիկ ռիսկի բոլոր բաղադրիչները, տարածքային և տվյալ ոլորտի զարգացման առանձնահատկությունները:

VI.2 ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՌԻՂՂՎԱԾ ԱՌԱՆՁԻՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

27. Տարբեր նշանակության շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացման առանձին ոլորտային նպատակային ծրագրերը (այսուհետ՝ Ծրագիր) նպատակաուղղված են բնակարանային ֆոնդի (բազմաբնակարան շենք, անհատական բնակելի տուն), հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների, այդ թվում հատուկ և կարևոր նշանակության օբյեկտների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացմանը:

28. Ծրագրերն ունեն համալիր բնույթ և ներառում են շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացման ուղղությամբ փուլային մոտեցմամբ իրականացվող համակարգված միջոցառումներ:

29. Ծրագրերի մշակման և իրականացման պատասխանատու մարմիններ են՝

1) Հանրապետական գործադիր մարմինները՝ իրենց կառավարման ոլորտում գտնվող շենքերի և շինությունների մասով.

2) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը և ոստիկանությունը՝ իրենց ենթակայության տակ գտնվող օբյեկտների մասով.

3) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը՝ պետական կառավարման մարմինների շենքերի և շինությունների մասով:

30. Հանրապետության պետական հանրակրթական դպրոցների սեյսմակայունության բարձրացման միջոցառումների իրականացումը նախատեսվում է ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի N 797-Ն որոշման համապատասխան:

31. Ծրագրերի մշակման և իրականացման պատասխանատու մարմինների կողմից մշակված ծրագրերն իրենց մեջ ներառում են մարզային և համայնքային ենթածրագրեր, որոնցում ընդգրկվում են նաև առանձին կազմակերպությունների ու սեփականատերերի տիրապետման, տնօրինման տակ գտնվող շենքերը և շինությունները:

32. Մարզային ենթածրագրերը մշակվում են տարածքային կառավարման մարմինների կողմից՝ առանձին ոլորտային նպատակային ծրագրերի համաձայն և ներառվում են մարզերի զարգացման ծրագրերում, իսկ համայնքային ենթածրագրերը՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ մարզի զարգացման ծրագրի համաձայն և ներառվում են համայնքների զարգացման ծրագրերում:

33. Հաշվի առնելով հանրապետության բնակարանային ֆոնդի համատարած մասնավորեցումը, ինչպես նաև բազմաբնակարան շենքերի ուժեղացման և վերականգնման աշխատանքների իրականացման վերաբերյալ շենքերի և շինությունների սեփականատերերի կողմից որոշումներ կայացնելու առանձնահատկությունները, բնակարանային ֆոնդի անվտանգ շահագործման ապահովմանն ուղղված ծրագրերի իրականացումը դիտարկվելու է առանձին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագրի համաձայն:

34. Ծրագրերի նկատմամբ վստահություն ձևավորելու նպատակով հանրապետությունում գոյություն ունեցող տարբեր նշանակության շենքերի և շինությունների ընդհանուր թվից առանձնացվելու են սեյսմակայունության տեսանկյունից առավել բարձր ռիսկային աստիճան ունեցող շենքերը և շինությունները, և առաջնահերթ կարգով դիտարկվելու են այդ շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացման խնդիրները՝ դրանց աստիճանական և նպատակային լուծման մոտեցման կիրառմամբ:

VI.3 ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՅՎՈՂ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

35. Տարբեր նշանակության շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացմանն ուղղված ծրագրերի արդյունավետ իրականացումը պայմանավորված է ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ նորմատիվ և մեթոդական

փաստաթղթերի, ինչպես նաև արժանահավատ տեղեկատվության առկայությամբ ու ֆինանսական ռեսուրսների ապահովմամբ, ինչի համար ձեռնարկվելիք քայլերն ըստ փուլերի հետևյալն են՝

1) **Առաջին փուլը** ներառում է 2018-2020 թվականները և հանդիսանում է Ծրագրերի մշակման համար նախապատրաստական փուլ, որի շրջանակներում նախատեսվում է՝

ա. շենքերի և շինությունների գույքագրում՝ դրանց քանակի և պատկանելիության ճշտում: Գույքագրման աշխատանքներն իրականացվում են Ծրագրերի մշակման պատասխանատու մարմինների կողմից.

բ. շենքերի և շինությունների սեյսմիկ անվտանգության ապահովման ոլորտի գործող նորմատիվատեխնիկական դաշտի բարելավում, արդիականացում, շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացման նոր տեխնոլոգիաների մշակում՝ նախապատվություն տալով այն տեխնոլոգիաներին, որոնք թույլ կտան աշխատանքներն իրականացնել առանց դրանց նպատակային շահագործումը դադարեցնելու.

գ. շենքերի և շինությունների փաստացի տեխնիկական վիճակի հետազննություն և անձնագրավորում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով: Շենքերի և շինությունների փաստացի տեխնիկական վիճակի հետազննության և անձնագրավորման աշխատանքները ենթակա են իրականացման գույքի սեփականատերերի կողմից.

դ. տվյալների միասնական տեղեկատվական բազայի ստեղծում՝ ըստ տարբեր նշանակության շենքերի և շինությունների, այդ թվում բնակարանային ֆոնդի: Տեղեկատվական բազան ձևավորվում է սեյսմակայուն շինարարության ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի կողմից՝ առանձին նպատակային ծրագրերի մշակման պատասխանատու մարմինների կողմից տնօրինվող տվյալների, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ու համապատասխան մարզպետարանների կողմից բնակարանային ֆոնդի մասով ներկայացված տվյալների հիման վրա: Տեղեկատվական բազայում գետեղված տվյալները ենթակա են թարմացման շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացմանն ուղղված Ծրագրերի իրականացման արդյունքներով: Հավաքագրված տվյալները կարտացոլեն տվյալ պահի դրությամբ իրական տեղեկատվություն սեյսմակայության բարձրացում պահանջող շենքերի և շինությունների մասին և հիմք կհանդիսանան այդ ուղղությամբ առանձին ոլորտային նպատակային ծրագրերի մշակման համար: Տվյալների միասնական տեղեկատվական բազայի ստեղծման, վարման և թարմացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

ե. Ծրագրերում շենքերի և շինությունների ընդգրկման առաջնահերթությունների որոշում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված

չափանիշների համաձայն: Ծրագրերում շենքերի և շինությունների ընդգրկման առաջնահերթությունները որոշում են Ծրագրերի մշակման պատասխանատու մարմինները, իսկ բնակարանային ֆոնդի մասով՝ համապատասխան մարզպետարանները (Երևանում՝ Երևանի քաղաքապետարանը):

2) **Երկրորդ փուլն** ընդգրկում է 2020-2022թթ. ժամանակահատվածը, որի ընթացքում նախատեսվում է մշակել շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացմանն ուղղված Ծրագրերը, հստակեցնել դրանց շրջանակներում ընդգրկված շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացման միջոցառումների կիրառման նախագծային ու շինարարական աշխատանքների իրականացման տեխնիկատնտեսապես արդյունավետ լուծումները, ինչպես նաև անհրաժեշտ միջոցներն ու ֆինանսավորման հնարավոր աղբյուրները: Ծրագրերի շրջանակներում դիտարկվելու են նաև այն շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացման աշխատանքների իրականացման հնարավորությունները, որոնց համար արդեն իսկ առկա են սահմանված կարգով մշակված, փորձաքննություն անցած ու հաստատված նախագծային փաստաթղթերը և հստակեցված են ֆինանսավորման աղբյուրները:

3) **Երրորդ փուլի** սկիզբը նախատեսվում է 2023 թվականից և նպատակաուղղվելու է՝


ա. շենքերի և շինությունների սեյսմակայության բարձրացմանն ուղղված նորարարական տեխնալոգիաների հնարավոր կիրամամբ մշակված նախաձային փաստաթղթերի համաձայն փորձնական ծրագրերի իրականացմանը.

բ. 2025-2030թթ. ժամանակահատվածը դիտարկվում է որպես Ծրագրերի համալիր իրականացման հիմնական ժամանակաշրջան:

36. Այն շենքերը և շինությունները, որոնց սեյսմակայունության բարձրացման աշխատանքների իրականացումը տեխնիկական վիճակի հետազննությունների արդյունքում մասնագիտացված կազմակերպությունների կողմից տրված եզրակացությունների համաձայն գնահատվել է տնտեսապես աննպատակահարմար, Ծրագրերի շրջանակներում դիտարկվելու են դրանց փոխարեն նոր սեյսմակայուն շենքերի և շինությունների կառուցման հնարավորությունները:

37. Ծրագրերի մշակմանն ուղղությամբ մեթոդական և սեյսմակայուն շինարարության նորմատիվ փաստաթղթերի մշակումն ու արդիականացումն ապահովում է սեյսմակայուն շինարարության ոլորտում պետական լիազոր մարմինը:

Տարբեր նշանակության շենքերի և շինությունների, այդ թվում բնակարանային ֆոնդի սեյսմակայունության բարձրացմանն ուղղությամբ իրականացվելիք քայլերի սխեմատիկ նկարագրությունները բերված են ստորև (Սխեմա N1, Սխեմա N2).



VI.4 ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ
ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴԳՐԿՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ
ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

38. Ծրագրերում շենքերի և շինությունների ընդգրկման առաջնահերթությունները որոշվում են տարբեր նշանակության շենքերի և շինությունների ընդհանրացված սեյսմիկ խոցելիությունը բնութագրող հանրագումարային ցուցանիշի համաձայն:

39. Հանրագումարային ցուցանիշը կառուցվում է երկու ընդհանրացված ցուցանիշների համադրման արդյունքում՝

- 1) ըստ սեյսմիկ ռիսկի բաղադրիչների.
- 2) ըստ սեյսմիկ խոցելիության բաղադրիչների:

Տարբեր նշանակության շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացման առաջնահերթության հանրագումարային ցուցանիշի կառուցվածքը բերված է ստորև.

Շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացման առաջնահերթության որոշման հանրագումարային ցուցանիշ

Սեյսմիկ ռիսկի բաղադրիչների ընդհանրացված ցուցանիշ

Սեյսմիկ ռիսկի բաղադրիչները

1. Շենքերի և շինությունների պատասխանատվության աստիճանն ըստ նշանակության.
2. Արտակարգ իրավիճակներում շենքը և շինությունները որպես աղետի կառավարման կենտրոն օգտագործելու կարողությունը.
3. Արտակարգ իրավիճակներում շենքերում և շինություններում միաժամանակ գտնվող մարդկանց կողմից ինքնուրույն գործելու հնարավորությունները և հմտությունները.
4. Շենքերում և շինություններում գտնվող մարդկանց հավանական թվականակը և ժամանակահատվածը.
5. Կառուցապատման և բնակեցման խտությունը:

Սեյսմիկ խոցելիության բաղադրիչների ընդհանրացված ցուցանիշ

խոցելիության բնութագրիչ բաղադրիչները

1. Շենքերի և շինությունների տեխնիկական վիճակը (ֆիզիկական մաշվածության և վնասվածության աստիճանի համատեղ հաշվառմամբ).
2. Շենքերի և շինությունների հավանական վարքը սպասվող սեյսմիկ ազդեցությունների ժամանակ.
3. Շենքերի և շինությունների տեղաբախշման տարածքի սեյսմիկ վտանգի մեծությունը.
4. Տարածքի ինժեներաերկրաբանական, հիդրոերկրաբանական, ռելիեֆային պայմանները, ֆիզիկաերկրաբանական գործընթացների և սեյսմակտիվ խզվածքների ազդեցությունը.
5. Շենքերի և շինությունների կառուցվածքային համակարգի կոնստրուկտիվ լուծումները, տիպը.
6. Շենքերի և շինությունների հարկայնությունը, ծավալահատակագծային և կոնստրուկտիվ լուծումների համապատասխանությունը գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջներին.
7. Շինարարության որակը:

40. Ծրագրերում շենքերի և շինությունների ընդգրկման առաջնահերթությունը որոշվում է տարբեր նշանակության շենքերի և շինությունների ընդհանրացված սեյսմիկ խոցելիությունը բնութագրող հանրագումարային ցուցանիշի բերված կառուցվածքում ներառված ցուցանիշների գնահատման միջոցով: Գնահատման մեթոդաբանական հիմքերը, յուրաքանչյուր ցուցանիշին համապատասխանող քանաքական արժեքները և ծրագրերում շենքերի և շինությունների ընդգրկման առաջնահերթությունների որոշման բանաձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

41. Շենքերի և շինությունների դասակարգումն ըստ առաջնահերթության՝ համաձայն հանրագումարային ցուցանիշի, հնարավորություն կտա բացահայտել այն շենքերը և շինությունները, որոնց սեյսմակայունության բարձրացումը համարվում է առաջնահերթ:

VI.5 ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԵՎ ԿԱՐԿՐՈՒՄԸ ԾՐԱԳՐԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

42. Սեյսմիկ ռիսկի նվազեցմանն ուղղությամբ շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձացման միջոցառումների իրականացումը խիստ ծախսատար է և դժվար է իրագործնել ֆինանսավորման մեկ աղբյուրի հաշվին: Մասնավորապես, փորձագիտական գնահատականների համաձայն հանրապետությունում առկա ավելի քան 545 հազար շենքերից և շինություններից միայն բարձր ռիսկայնություն ունեցող տարբեր նշանակության թվով 117 հազար շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննությունների և անձնագրավորման համար կպահանջվի մոտ 35,0 մլրդ ՀՀ դրամ, այդ թվում բազմաբնակարան շենքերի համար՝ մոտ 6,0 մլրդ ՀՀ դրամ:

43. Շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը նախատեսվում է համաֆինանսավորման սկզբունքով՝ պետական և համայնքային բյուջեների, մասնավոր և այլ դոնոր կազմակերպությունների միջոցների հաշվին՝ ՊՄԳ գործիքների կիրառմամբ, այդ թվում նաև վարկային միջոցների ներգրավմամբ: Ընդ որում, բնակարանային ֆոնդի սեյսմակայունության բարձրացմանն ուղղված ծրագրի շրջանակներում չի բացառվում շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի և անձնագրավորման իրականացման աշխատանքների դիմաց շենքերի և շինությունների սեփականատերերի կողմից կատարվող վճարների մասնակի սուբսիդավորումը:

44. Ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ միջոցները և ծրագրերին մասնակից կողմերի մասնաբաժինները կհստակեցվեն առանձին նպատակային ծրագրերի մշակման ժամանակ:

VI.6 ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

45. Շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացմանն ուղղված ոլորտային նպատակային ծրագրերի իրականացման արդյունքում ակնկալվում է՝

- 1) տարբեր նշանակության շենքերի և շինությունների սեյսմիկ խոցելիության մակարդակի և սեյսմիկ ռիսկի նվազեցում,
- 2) շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացման ոլորտում նորարարական տեխնոլոգիաների մշակման և ներդրման հնարավորությունների ստեղծում,
- 3) տարբեր նշանակության շենքերի և շինությունների հուսալիության, հարմարավետության և շահագործման սպառողական հատկանիշների բարձրացում,
- 4) տարբեր նշանակության շենքերի և շինությունների սեյսմակայունության վերաբերյալ հավաստի և հասանելի տեղեկատվության ապահովում,
- 5) սեյսմակայուն շինարարության նորմատիվատեխնիկական դաշտի արդիականացում,
- 6) բնակչության կենսագործունեության համար անվտանգ և կայուն պայմանների ստեղծում,
- 7) անվտանգ քաղաքաշինական միջավայրի ձևավորում:

VII. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ

46. Շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացման ռազմավարության հաջող իրականացմանը խոչընդոտող ռիսկերը կարող են լինել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին բնույթի:

47. Ռիսկերի շարքին դասվում են՝

- 1) տարբեր նշանակության շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացմանն ուղղությամբ ոլորտային նպատակային ծրագրերի շարունակական իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների բացակայություն կամ ոչ բավարար մակարդակի ապահովում,
- 2) համապատասխան միջոցառումների իրականացմանն ուղղությամբ շահագրգիռ մարմինների փոխհամաձայնության և մասնավոր հատվածի կողմից բավարար հետաքրքրվածության բացակայություն,
- 3) քաղաքական, սոցիալ-տնտեսական պայմանների փոփոխությամբ պայմանավորված ֆորսմաժորային իրավիճակի առաջացում:

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

**Հայաստանի Հանրապետությունում շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացման
 ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների**

Միջոցառման անվանումը	Աակնկալվող արդյունքը	Կատարողը	Համակատարողը	Ֆինանսավորման աղբյուրը	Ժամկետը
1. Շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների 1-ին փուլ՝ 2018-2020թթ.					
1.1 Տարբեր նշանակության շենքերի և շինությունների գույքագրում	Տարբեր նշանակության շենքերի և շինությունների թվի, դրանց պատկանելիության վերաբերյալ ճշտված տեղեկատվություն	Հանրապետական գործադիր մարմիններ	ՀՀ մարզպետարաններ, ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)	Ֆինանսավորում չի պահանջվում	2018թ.
1.2 Շենքերի և շինությունների սեյսմիկ անվտանգության ապահովման ոլորտի նորմատիվատեխնիկական դաշտի բարելավում, արդիականացում, շենքերի և շինությունների սեյսմիկայունության բարձրացման մեթոդաբանության մշակում	Շենքերի և շինությունների նախագծման, շինարարության և շահագործման համար սեյսմիկ անվտանգության պահանջներ ու տեխնիկական պայմաններ սահմանող նորմատիվատեխնիկական և մեթոդական փաստաթղթեր	ՀՀ սեյսմակայուն շինարարության ոլորտի պետական լիազոր մարմին	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ՀՀ օրենքով չարգելված աղբյուրներ	2018-2019թթ.

<p>1.3 Նոր կառուցվող և գոյություն ունեցող տարբեր նշանակության շենքերի և շինությունների անձնագրավորման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում</p>	<p>Շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացման տեսանկյունից դրանց անձնագրավորման կարգի սահմանում</p>	<p>ՀՀ սեյսմակայուն շինարարության ոլորտի պետական լիազոր մարմին</p>	<p>ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>	<p>2018թ.</p>
<p>1.4 Տարբեր նշանակության շենքերի և շինությունների փաստացի տեխնիկական վիճակի հետազննություն և անձնագրավորում</p>	<p>Տարբեր նշանակության շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացմանն ուղղված նպատակային ծրագրերի իրականացման համար ելակետային տեղեկատվության ապահովում</p>	<p>Հանրապետական գործադիր մարմիններ</p>	<p>Շահագրգիռ կողմեր</p>	<p>ՀՀ օրենքով չարգելված աղբյուրներ</p>	<p>Սկսած 2019 թվականից շարունակական</p>
<p>1.5 Տարբեր նշանակության շենքերի և շինությունների տվյալների միասնական տեղեկատվական բազայի ստեղծման և վարման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում</p>	<p>Տարբեր նշանակության շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացմանն ուղղված առանձին ոլորտային նպատակային ծրագրերի իրականացման համար ելակետային տվյալների հավաքագրման և շարունակական ներառման կարգի սահմանում</p>	<p>ՀՀ սեյսմակայուն շինարարության ոլորտի պետական լիազոր մարմին</p>	<p>ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>	<p>2019թ.</p>
<p>1.6 Տարբեր նշանակության շենքերի և շինությունների, ներառյալ բնակարանային ֆոնդի տվյալների միասնական տեղեկատվական բազայի ներդրում, տվյալների շարունակական ներառում թարմացում</p>	<p>Շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ հավաստի և ամբողջական տեղեկատվության ապահովում և սեյսմակայության բարձրացում պահանջող շենքերի և շինությունների մասով առանձին ոլորտային նպատակային ծրագրերի մշակման համար հիմքերի ստեղծում</p>	<p>ՀՀ սեյսմակայուն շինարարության ոլորտի պետական լիազոր մարմին</p>	<p>Հանրապետական գործադիր մարմիններ ՀՀ մարզպետարաններ, ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)</p>	<p>ՀՀ օրենքով չարգելված աղբյուրներ</p>	<p>Սկսած 2020 թվականից շարունակական</p>

<p>1.7 Շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացմանն ուղղված առանձին ոլորտային նպատակային ծրագրերում շենքերի և շինությունների ընդգրկման առաջնահերթության որոշման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում</p>	<p>Շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացմանն ուղղված ծրագրերում շենքերի և շինությունների ընդգրկման առաջնահերթության ցուցանիշների սահմանում և յուրաքանչյուր ցուցանիշի գնահատման մեթոդաբանական հիմքերի ստեղծում</p>	<p>ՀՀ սեյսմակայուն շինարարության ոլորտի պետական լիազոր մարմին</p>	<p>Հանրապետական գործադիր մարմիններ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջում</p>	<p>2020թ.</p>
<p>2. Շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների 2-րդ փուլ՝ 2020-2022թթ.</p>					
<p>2.1 Տարբեր նշանակության շենքերի և շինությունների (բացառությամբ բնակարանային ֆոնդի) սեյսմակայունության բարձրացմանն ուղղված առանձին ոլորտային նպատակային ծրագրերի մշակում</p>	<p>Ծրագրերի շրջանակներում ընդգրկված շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացման միջոցառումների կիրառման նախագծային ու շինարարական աշխատանքների իրականացման տեխնիկատնտեսապես արդյունավետ լուծումների, ինչպես նաև անհրաժեշտ միջոցների ու ֆինանսավորման հնարավոր աղբյուրների հստակեցում</p>	<p>Հանրապետական գործադիր մարմիններ</p>	<p>ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն ՀՀ մարզպետարաններ, ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>	<p>2020-2022թթ.</p>
<p>2.2. Բնակարանային ֆոնդի սեյսմակայունության բարձրացմանն ուղղված նպատակային ծրագրի մշակում</p>	<p>Ծրագրի շրջանակներում ընդգրկված բազմաբնակարան շենքերի և անհատական բնակելի տների սեյսմակայունության բարձրացման միջոցառումների կիրառման նախագծային ու շինարարական աշխատանքների իրականացման տեխնիկատնտեսապես արդյունավետ լուծումների, ինչպես նաև անհրաժեշտ միջոցների ու ֆինանսավորման հնարավոր աղբյուրների հստակեցում</p>	<p>ՀՀ սեյսմակայուն շինարարության ոլորտի պետական լիազոր մարմին</p>	<p>ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն ՀՀ մարզպետարաններ, ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>	<p>2020թ.</p>

3. Շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների 3-րդ փուլ՝ սկսած 2023թ.					
3.1 Հանրապետության քաղաքներից մեկում շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացմանն ուղղված նորարարական տեխնոլոգիաների կիրառմամբ փորձական ծրագրի իրականացում	Փորձարկել նորարարական տեխնոլոգիաների կիրառմամբ շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացման աշխատանքների իրականացումը՝ խթանելով դրանց կիրառելիությունը	ՀՀ սեյսմակայուն շինարարության ոլորտի պետական լիազոր մարմին	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	ՀՀ օրենքով չարգելված աղբյուրներ	2023-2024թթ.՝ Ֆինանսական միջոցների առկայության դեպքում
3.2 Տարբեր նշանակության շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացմանն ուղղված նպատակային ծրագրերի իրականացում	Շենքերի և շինությունների հուսալի շահագործման և բնակչության կենսագործունեության համար անվտանգ ու կայուն պայմանների ապահովում	Հանրապետական գործադիր մարմիններ	ՀՀ տարածքային կառավարման մարմիններ, Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)	ՀՀ օրենքով չարգելված աղբյուրներ	2025-2030թթ.՝ Ֆինանսական միջոցների առկայության դեպքում

